# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային և պատճենահանման սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-18/37» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «24» սեպտեմբերի 2018թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին

*հանձնաժողովի նախագահ՝*

**Էդգար Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման հանձնաժողովի ղեկավար՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վարչական դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Գրիգոր Գաբրիելյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արթուր Թամրազյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ ԳՊ/Մհմ) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

Նիստից բացակայում էր՝

Խորեն Պետրոսյան՝ (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության մասնագետ:

1. **ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետում «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն, ինչպես նաև տեղեկանքներ՝ 2018թ օգոստոսի 28-ի, սեպտեմբերի 03-ի դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ:**

***Ուսումնասիրելով ներկայացված փաստաթղթերը՝ հանձնաժողովը որոշեց.***

Նիստը կասեցնել.

-գրությամբ դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի գնահատման և/կամ մերժման վերաբերյալ Լիազոր մարմնի դիրքորոշումը ստանալու նպատակով.

-հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել Լիազոր մարմնի կողմից պատասխան գրության ստացմանը հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 12:00-ին:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ Էդգար Մելքոնյան

Անդամներ՝

Էդգար Տոնականյան

Գրիգոր Գաբրիելյան

Արթուր Թամրազյան

Քարտուղար՝ Արուս Խաչատրյան